ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

1901 թ. Ստեփանավան, Սոս Սարգսյան 1
էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am
վեբ կայք՝ www.stepanavan.am

(374-256) - 22-233
ֆաքս - 22-233

No «566» 17 հուլիսի 2020թ.

«Հետք» թերթի լրագրող

Քրիստինե Աղալարյանին

Հարգելի Քրիստինե Աղալարյան

Ի պատասխան Ձեր հարցմանը.

*Հարց 1:* Կից ներկայացնում եմ արձանագրությունը , որը կազմվել է փորձանմուշներ վերցնելու օրը: Պատասխանները դեռ չեն ստացվել:

*Հարց 2:* «Սագամար» ՓԲԸ- ի կողմից տարիներ շարունակ ախտոտվել է Ձորագետը: 2018 և 2019թթ. հարուցվել են քրեական գործեր, որոնց կցվել են նաև սատկած ձկնատեսակներ և լուսանկարներ, ինչպես նաև կատարվել է ջրի փորձաքննություն՝ պարզվել է, որ ջրում առկա են ծանր մետաղներ, որի հետևանքով սատկել են ձկները: Բացի վերը նշվածը տարիներ շարունակ Ստեփանավանի համայնքապետարանը գրություններ է ուղարկել պատկան մարմիններին և «Սագամար» ՓԲԸ- ին, այն մասին, որ.

1. «Սագամար» ՓԲԸ- ն իր հողերը օգտագործել և շարունակում է օգտագործել ոչ նպատակային նշանակությամբ:
2. «Սագամար» ՓԲԸ- ի կողմից տարիներ շարունակ արտադրական թափոնները և պոչանքները թափվել են Ստեփանավան համայնքի պատկանող հողերը, ինչպես նաև ֆիզիկական անձանց սեփականություն հանդիսացող հողերը, որոնցից մեկնել էլ պատկանում է ինձ:

*Հարց 3:* 2013թ.-ից սկսած Ստեփանավանի համայնքապետարանը պարբերաբար գրություններ է ուղարկում «Սագամար» ՓԲԸ- ին հողերի նպատակային նշանակությունը փոխելու և ապօրինի գործողությունները դադարեցնելու համար: Վերջին 7 տարիների ընթացքում ընկերությունը ունեցել է 9 տարբեր տնօրեն.

1. Վարդան Պապյան
2. Ալեքսանդր Միշկովսկի
3. Շամին
4. Դմիտրի Ուշկով
5. Կարեն Ղազարյան
6. Գենադի Ժուկով
7. Կարեն Ղազարյան
8. Հրաչ Հարությունյան

9. Սամվել Զոբանյան

Վերոնշյալ տնօրենների հետ ցավոք ընդհանուր հայտարարի գալ չի հաջողվել: Մասնավորապես 2014թ.-ին ընկերությունը փոխել է արտադրական շինությունների տակ գտնվող հողերի նպատակային նշանակությունը, սակայն պետական գրանցում չի կատարել, որի հետևանքով Ստեփանավան համայնքին պատճառվել է հսկայական վնաս:

***Հարց 4:*** «Սագամար» ՓԲԸ- ն 2013թ.-ից սկսած ապօրինի օգտագործել է համայնքային սեփականություն հանդիսացող հողերը, ֆիզիկական անձանց պատկանող հողերը, այդ թվում նաև ինձ պատկանող հողերը: Տարբեր տնօրենների հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ խնդիրները օրենքի սահմաններում լուծելու վերաբերյալ, սակայն տնօրենները հաճախակի փոխվել են, որի պատճառով բանակցությունները սկսվել են 0-ից: Վերջին հնարավորությունը մնում էր դատարան դիմելը:

***Հարց 5:*** 1993թ.–ից զբաղեցրել եմ «Հայ մարմար-գրանիտ» ընկերության Ստեփանավանի մասնաճյուղի գործադիր տնօրենի պաշտոնի, որի մեջ մտնում էր Ստեփանավանի քարի արտադրամասը և Արմանիսի մատնանշված 8 հա տարածքը: Ընկերության վերաձևավորումից հետո ստեղծվել է «Ալմաքար» ՓԲԸ-ն, որում ունեցել եմ բաժնեմաս: Հենց այդ միջոցներով էլ ձեռք եմ բերել նշված արտադրամասը, Արմանիսի հողերը վարձակալել եմ, ապա դիմել եմ համայնքապետարան վարձակալված հողերը աճուրդով ձեռքբերելու համար, որը տեղի է ունեցել 2010թ.-ին:

***Հարց 6:*** 1993թ.-ին ես գործունեություն եմ ծավալել նշված տարածքներում և այդ ժամանակ չի եղել որևէ արտադրական ձեռնարկություն՝ «Սագամար» ՓԲԸ-ն ստեղծվել է միայն 2005թ.-ից հետո: Իսկ նպատակը միշտ էլ եղել է նշված տարածքից քարի արտահանումը:

Տարիների ընթացքում «Սագամար» ՓԲԸ- ի ապօրինի գործունեության հետևանքով Ստեփանավան համայնքին պատճառվել է մոտ 300000 մլն. դրամի վնաս: Ձեզ ի՞նչ է թվում խնդիրը 8 հա թե՞ համայնքին պատճառված վնասի, Զորագետի ախտոտման մեջ է, որը ի դեպ հանդիսանում է տուրիստական կարևոր ենթակառուցվածք, իսկ հանքերի հատուկ բարեգործական ծրագրեր և ներդրումներ 8 տարվա ընթացքում չեն իրականացվել, սակայն «Սագամար» ՓԲԸ-ն ուներ նման պարտավորություն, այս դեպքում համայնքապետարանի կողմից ուղարկված գրությունները մնացել են անարձագանք, իսկ բնավճարներ երբեք չեն վճարվել: Այս ամենի արդյունքում համայնքի կրած վնասը կարելի է միայն ենթադրել, որը անհամեմատելի է 8 հա հողում կրած վնասի հետ:

Կից ներկայացվում են համապատասխան փաստաթղթերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ